

891.99

47-13

686-17/1528

891.542-7

ԿԲ-15



Մ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

## ԾԻԾԱՂԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Հայոց ժողովրդին կարեկցում են  
միայն որդիս հաշմանդամ և թոյլ ա-  
րարածները: Մ. Բագր.

Քերտիկներու վրայ լալն, թե-  
րտիկներու մեծադրոյնն է:  
Յակ. Պարոնեան.

II.

## ՇՕՌ-ՇՕՌ-ԱՔԱՐԱՓ

ՆՐԻՆԾ. ՊԱՅՏԵՐ.

ՏՊԱՐԱՆ «ԼՈՍՍ» ԵՐԵՎԱՆ

1914

891.99  
5-13

6 NOV 2011

1001  
4788



Մ. ԲԱԳԲԱՏՈՒՆԻ

64

ԾԻԾԱՂԻ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ

Լացող ժողովրդին կարեկցում են  
միայն որպէս հաշմանդամ և թող ա-  
րարածներէ: Մ. Բագբ.

Թերութիւններու վրայ լալն, թե-  
րութիւններու մեծագոյնն է:  
Յակ. Պարոնեան.

I.

ՇՕՌ-ՇՕՌ-Վ. ԲԱՐԱՓ

ԵՐԳԻՄ. ՊԱՏԱԿԵՐ.

ՏՊԱՐԱՆ „ԼՈՅՍ“ ԵՐԵՎԱՆ  
1914



## ՇՕՌ ՇՕՌԱՔԱՐԱՓ

### I.

**Ե**րեկոյեան ժամի ինն էր. Մուղնեցի Շոռշօնն ու Բիրաբենց Մուգուչը վանքի ետեով, գաղտազողի անցան դէպի Աշտարակու այգիները: Շոռշօնի թևի տակ երևում էր ծալած մի տկճոր, իսկ Բիրաբենց Մուգուչը չիբուխը վառած, փնչացնելով, սուս ու փուս գնում էր նրա կողքի հետ: — Ես Մուղնու զօրաւոր սուրբ Գէորգ, դու աջողես. կանչեց Շոռշօնը երեսը դարձնելով դէպի վանքը, գլխից փափախը վերցնելով: — Աղա, ախմախ, սուրբ Գէորգին գլխու ես գցում, երկիւղածութեամբ դարձաւ Շոռշօնը Մուգուչին. — սուրբ Գէորգը ինչ գործ ունի մեր գինու գողութեան հետ:

— Էդ քու բանը չի, սուրբ Գէորգը գիդա, որ մենք առանց գինու ապրօղը չենք ու փող էլ չունենք. էնա, պէտքա գողանանք, էլի: Բաս չը պտենք գլուխ պըհի:

— Էս թաւուր գլուխ պըհիլը սատանի գործ ա, պէտք ա սատանէն մեզ յաջողի, թէ չէ սուրբ Գէորգը ինչ գործ ունի:

— Ո՛չ, ես մի քրիստոնիա մարդ եմ, սուրբ Գէորգը իմ աղէն ա, ես առանց նրան իսկի գողութեան էլ չեմ գնա, ձեռս գցում եմ նրա փէշն ու գնում:

— Սուրբ Գէորգը դիւանդ անի, ասաց Շոռշօնն ու

էլ չխօսեցին մինչև Աշտարակու այգիներին հասնելը:  
Լուսինը Արայեան սարի ետեից մի մարդւորոյ  
բարձրացաւ և մտաւ թուխպ ամպերի ետեւը:

Հէնց որ մտան այգիների մութ և ոլորապտոյտ  
պատերի մէջ, Մուգուչը թագցնելու համար իր ահ ու  
դողը, դարձաւ դէպի Շօռշօռը խրելով չիբուխը մէջ-  
քին:

—Ասենք զաշաղի սիրտ ունեմ, հա, Շօռշօռ, կա-  
սենաս հարսանիք եմ էթլմ, հէջ վախ ասած բանը  
չգիշամ:

—Էսթաւուր գողութիւնը հարսանիք չի, ի՞նչ ա,  
ներքուստ ոչ պակաս դողալով ասաց Շօռշօռը, նայե-  
լով շրջապատի մութ և սարսափեցուցիչ ստեղծներին,  
ուր հսկայական ծառերն ու բարձր ցանկապա-  
տերն իրենց ստեղծներով զանազան պատկերներ էին  
նկարում գիշերային մթութեան մէջ:

—Սպասիւր, Շօռշօռ, կասենաս մարդ եմ տեսնում:

—Ո՛ւրա, ո՛ւրա, դողալով ասաց Մուգուչը, թագ-  
նրելով Շօռշօռի ետեւում.— ո՛ւրա, ո՛րտեղա:

—Հրէ՛ն, կասենաս գալիս ա դէպի մեզ, փախիւր,  
ասաց Շօռշօռն ու բարձրանալով մի այգու պատի  
վրայ, այնտեղից թռաւ ցած և թաղնեց մի խոռոչի  
մէջ. Նրան հետեւեց Մուգուչը, բայց պատից այնպէս  
վէր ընկաւ, որ քիչ մնաց փշրւէր:

—Աղա, կամաց վէր ընկի, ի՞նչ ես անում, ասաց  
Շօռշօռը խեղդած ձայնով.— սնւա կաց, տեսնենք, ի՞նչ  
ա գալի գլուխներս: Եւ նրանք երկար ժամանակ  
շունչները փոքները քաշած, մնացել էին իրենց տիգնե-  
րում զամւած:

—Աղա, բալքի դարալթու էր, ես ծառի քօթուկ,  
վերջապէս ասաց Շօռշօռը.— Բա տեսար ո՞չ:

—Տեսա, բայց կասեա թէ տեղումը շարժում էր:

—Աղա, բալքի մարդ չէր:

—Ո՛վ գիշա:

—Բալքի ուրիշ բան էր, ես ծառի շւար:

—Ի՞նչ ես ասում, եաւաշ մի տէսենք:

Շօռշօռը թագստեան տեղից գլուխը կամաց բարձ-  
րացրեց և սկսաւ ուշադրութեամբ նայել չորս կողմը:  
Յիտոյ՝ սրտապնդւելով, դուրս եկաւ տեղից և պա-  
տի տակով սկսաւ կուզէ-կուզ առաջ գնալ:

Նրան հետեւեց Մուգուչը:

Այգալէս, երկար ժամանակ չորքոտանու պէս գնա-  
լուց յետոյ, վերջապէս Շօռշօռը ուղիւ կանգնեց ու  
սկսեց այնպէս գնալ:

Նրան հետեւեց նաև Մուգուչը:

—Ը՛հր, հրէն ա, ասաց Շօռշօռը և նորից կպաւ  
գետնին:

Նրան մերհնաբար հետեւեց նաև Մուգուչը, բայց  
այնուամենայնիւ ոչ ոք չկար:

Շօռշօռն առաջինը բարձրացրեց գլուխը:

—Աղա, կասեա ոչ որ չկայ:

—Լաւ մտիկ արա:

—Ըսկի սատանա էլ չկայ:

—Ամա դօշադրութիւն ա, հա, պարծեցաւ Մուգուչը.

—այ թէ տէրտէրենց վարդանի չախմախլուն ձեռիս  
ըլէր, հինգը մի սըրի վեր կածէի:

—Ո՛ւմ:

—Ասենք, ո՞վ կայ որ, ո՞չովի, ասաց Մուգուչը և  
սկսան առաջ գնալ:

Մի ամբողջ ժամ այս այգուց միւս այգին անցնե-  
լով, յաճախ ցանկապատերից վայր գլորւելով, մա-  
ցառներից ու փշոտ թփերից ծւառւելով, վերջապէս  
նրանք հասան Աշտարակու Խուբանները:

—Իշուր կաց, Մուգուչ, հասել ենք, կանգ առաւ  
Շօռշօռը մի ցանկապատի առաջ:

—Հունարդ խարջի, հէջ մի վախիլ. ես քեզ հեա  
եմ, պատասխանեց Մուգուչը սարսափ թագցնելով:

Եւ նրանք իրար կպած, կուզէ-կուզ, մին կանգնե-  
լով, մին սրելով ահանջները, սկսան առաջ գնալ:

Լուսինն ամպերի ետեից յանկարծ դուրս եկաւ և

լուսաւորեց ամբողջ ծառագարդ շրջապատը:

— Աղա, Շողոն, դարգանդն ինձ կոխում ա:

— Հէջ վախիլ մի, ես բեզ հետ եմ. բա մի տկճոր գինի ձեռք բերելը հեշտ ա:

Գինու անուշը լսելով, Բիրաբինց Մուգուչը ահա-մայից բերանը ծոծուպացրեց և ահ ու երկիւղի բնագղը ճնշելով իր մէջ, սկսաւ հետեւել Շողոնին:

Մի քանի բոպէից յետոյ, նրանք կանդ առան մի հնձանի առաջ:

— Աղա, Շողոն, դուք կողպած ա:

— Բառ ուզում էիր՝ որ դուռն էլ բաց ընէր:

— Դէ, ախար, բանն ըսենց ծանդբանում ա:

— Պէտք ա զըֆիլը կոտրել:

— Կոտրենէլ... երկարացրեց Մուգուչը սարսա-փած. — Դնց կոտրենք, բառ որ իմանան:

— Էլ ջուրն ընկնողը անձրեից չի վախենա. մի թոդ տէնեմ, ասաց Շողոն ու մօտեցաւ կողպէքին, ձեռք գցեց ու— հա Մօղնու աղա սըր Գէորգ, ասաց ու ձգեց:

Բայց կողպէքն առանց դժւարութեան, իսկոյն բաց եղաւ ու միաց Շողոնի ձեռքումը:

— Աղա, զըֆիլը բաց ա, Մուգուչ:

— Դրճւճւստ, էդ հօ լաւ էլաւ:

— Ասենք, որ լաւն իմանաս, սըր Գէորգը բաց ա-բուց. թէ չէ՝ ինքն իրան բաց ընողը չէր:

— Բա որ ասում էի... ասաց Մուգուչը յիշեցնելով իր ազօթը. — համա, մեր տղայ, մենք էլ պակաս գէլերը չենք հա. ամեն սատանութիւն ձեռնընդունելու վէր ա գալիս. համա, Շողոն, Տէրը ոչ կամենայ որ կալիլ են. էնդար չեն տալ, ինչքան քաշ պտեն տալ:

— Աղա, ում. ինձ Շողոն կասեն. 25 մարդ էլ որ վրայ գտն, էլ եդ ջուղաբները կտամ. բուշարթ դաֆիլ տեղը չբռնեն:

Այդ ժամանակ նրանք ներս էին մտել և երկուսն էլ իրար բռնած, մթութեան մէջ խարխալելով առաջ

էին գնում, փնտռելով գինու կարասները:

— Եւաւա, տէնեմ, էս լինչ ա, ասաց Շողոնը շօ-շափելով ինչ որ մի բան:

— Գինու կարասը կընի. լաւ մտիկ արա, ասաց Մուգուչը, ինքն էլ մօտենալով նրան. — աղա, եւովա մի սպիչկա վառեմ:

— Չէ, չէ, մի վառի. աւուշկէքից լիսը կերեայ. առանց էն էլ իմ աչքերը կատուի աչքերի նման լիս են տալի. սոսա կաց, կարասն ա. խուփը հրէս. ըն՛, բաց արի, կասես միջին բան չկայ. բայց կարելի ա, խո-րուսն ա, ոտներիցս պահի, որ կլխկօնծի չտամ մէջը. ասաց Շողոնը և մինչև կէսը կախեց կարասի մէջ:

— Կայ, կայ, Մուգուչ, գինի կայ, տկճորն ինձ տո՛ւր, էս բոպէիս լցնեմ: Եւ Շողոնը բանալով տկճո-րի բերանը, թաթախեց կարասի մէջ:

— Զան, կլկլոցիդ դուրբան, կարասի մէջ մոմաց Շողոնը. — էսօր մեր քեֆին քէֆ չի հասնիլ:

— Մի կուշտ էլա կխմենք:

Տկճորը լցելուց յետոյ, Շողոնը ձռնչալով հագիւ դուրս եկաւ կարասի միջից, քաշելով տիկը և մթու-թեան մէջ սկսաւ թելով կապել բերանը:

Բայց այդ ժամանակ, յանկարծ դրսից լսեցին ոտքերի ձայներ, որոնք մօտենում էին դռանը:

Մի սարսուռ անցաւ երկու գողերի մարմնովը:

— Շողոն, մարդ... ա գգալի... բռնեցինք. սար-սափից լեզուն բռնած, կմկմաց Մուգուչը:

— Փախչենք, ասաց Շողոնը, տիկը շալակն առ-նելով:

— Տունդ քանդի, դուք փախչենք, հրէ դռան առաջը կանգնած են:

Այդ ժամանակ Շողոն անգիտակցաբար և առանց իմանալու ուր գնալը, բերը շալակին սկսաւ պտոյտ տալ հնձանի մէջ: Մուգուչը նրա փեշից բռնած, սկսաւ հետեւել նրան:

Մէկ էլ դուռը բացեց և հնձանի շէմքի վրայ երե-

ւացին երկու աղամարդիկ:

Իսկ այդ ժամանակ, հնձանի վերին մութ անկիւններէն մէկում, իրար ետեւից լուսնին երկու թրմփոց:

## II.

—Աղա, Բաղդօ, ախրը մենք դռան կողպէքը գցել էինք, բա էս ով ա բաց արել, ասաց ներս եկողներից մինը կասկած յայտնելով:

—Ե՛հ, դէ՛լ... կասես սատանէքն էկան բաց արին, կարելի ա մուտցել ես ու չես կողպել:

—Ով գիտա, կարելի ա, դէ մի ճրագը վառի, տէնենք:

Վայրկենապէս լուսնին վառեց և հնձանի խաւար մթութիւնը լուսաւորեց փոքրիկ լամպարի աղօտ լոյսով: Հնձանում ոչ ոք չկար. ձայն, ծպտուն չէր լսոււմ. չկային և Շօռչօն ու Մուզուշը: Հնձանի չորս պատերի երկարութեամբ շարւած էին գինու խոշոր կարասներ. առաստաղը ամբողջովին ծածկւած էր բազմատեսակ խաղողի կախաններով: Այս ու այն կողմը դարսւած էին լիք-լիք տոպրակներ, զանազան ամանեղէն, կճուճ, բժութ, աւիլ, փայտեղէն, բահ, թիակ և զանազան այգեգործական անհրաժեշտութիւններ:

Միայն կենտրոնում մի փոքր աղատ տեղ կար, որտեղ և եկողները փռելով մի կապերտ, նստեցին և վայր դրին բերած կապոցները:

—Դէ, Բաղդօ ջան, վեր կաց դու արքաղ ջարդիր, իսկ ես խորվածը կտորեմ ու շարեմ. ասաց ընկերներից մինը, բանալով թաշկինակում կապած միսն ու կարմիր պամադօրը. —համա խորովածացու ա, համա լաղաթ, աղա, աղը հրդի ա...

—Աղը հրէն սե գինու կարասի արանքումը, ասաց Բաղդօն և դուրս դնաց կրակ անկուռ:

Հնձանում մնացողը հանելով դանակը, սկսաւ միսը կտորել և շարել փայտէ շամփուրների վրայ:

Մի բոպէից յետոյ, հնձանի կողքին բարձրացաւ կրակի լոյսը, որը մթութեան մէջ, մերթ նւազելով, մերթ բարձրանալով, հնձանի ներսը մերթ մթնում էր, մերթ էլ լուսաւորում:

—Աղա, Բաղդօ, լտեղից մի քանի հատ կանաչ տախտեղ քաղի բեր. լաւերը ջոկիր, ցուրտը տարած չնի հա:

Եկաւ և կանաչ տաքտեղը և մեր հնձանաւորները մի քանի շամփուր խորովածը վեր առած, դուրս եկան հնձանից և պաղելով կրակի առաջ, սկսան խորովել:

Բայց հնձանի ներսում, անկիւնի տաքարի մէջ, սկսաւ լսիլ լինել ինչ որ փսփոսոց, որոնք, իհարկէ, չէին հասնում հնձանաւորների ականջին:

—Աղա, Շօռչօն, բա մնց պտի ըլնի մեր ճարը. հալա լաւ ա, որ տաքարը հին ա, միջին ջէջ չկա, թէ չէ խեղդելի պտէինք:

—Վայ, կողքս. համա շատ փիս վէր ընկա. տնքում էր Մուզուշը:

—Իմ էլ մէջքս ա փիս ցաւում:

—Ախր դու իմ գլխին ընկար, թէ չէ բանֆորէ պտէիր ըլնի. վայ, կողքս, ասում էր Շօռչօն տնքալով: —Բայց տէնես, շատ խորն ա էս տաքարը:

—Եաւաշ մի տէնէմ, ասաց Մուզուշն ու կանգնելով, ձեռքերը պարզեց դէպի վեր:

—Շատ խորն ա, Շօռչօն, դուրս գալու հնար չկայ:

—Վայ մեր տանջւած ջանին, էս հորումը պէտք ա մեռնենք ու գնանք. տունդ քանդելի, այ Շօռչօն, մի տղճոր գինու դազարի էկար:

—Վայ, վայ, վայ, էսօր մեր վերջին օրն ա. այ Շօռչօն, անտէրտէր պտենք թաղւի էս անփոր գերեղմանի միջին. վայ, Աստօծ, վայ, բաս էլ Մուզուշն տէ-

նիլ չպտեճք, բայց մեր տոճնը, մեր օղորդանքը... վայ, Այմաստ ջան, եարաբ հնց պտես անի, հնց պտես գլուխդ պահի, ողբում էր Շօռշօռը:

—Այ ֆողը գլխիդ, իւրովի ասաց Մուգուչը.—միթամ, թէ ինքն էր կնգա գլուխը պահում ան:

—Ախր քու դարդը ո՞վ պէտք ա քաշի, ան, Այմաստ ջան, եարաբ իմ կարօտից հնց պէտք ա տանջւիս. մարդի պտես գնամ, թէ սե լաչադ պտես գցի ու մինչև մահդ ֆնաս գլխիդ վայ տալով:

—Վայ, վայ, վայ, Նխսօ ջան, սկսեց Մուգուչը. —բոյ ու բուսած թիւ դուրբան, Նխսօ ջան, վրիդ կապած հաղին մեռնեմ, Նխսօ ջան, բա դու հնց պտես անի առանց ինձ:

—Այ մեռար, հա, փնփնթաց Շօռշօռը. —միթամ թէ Նխսօն իրան շան տեղ դնում ան, եա վարդապետի կշտից տուն ա գալի, հիմի էլ տաքարի միջին ազդդւորեց, հողիմ գլուխդ:

—Նխսօ ջան, եարաբ ինձանից եղը մարդու գնալ պտեմ, եանի դու ըտենց նամարդութիւն կանեմ. Աստօծ վկայ ան, գերեզմանից դուրս կգամ, գլխիդ կբուսնեմ ու ֆոքիդ ծործորակովդ կհանեմ:

—Այ մեռար, հա, մրթմրթաց Շօռշօռը լացակամած.—հալա մի էս տաքարից դուրս արի, հէնց իմանաք թէ գերեզմանից դուրս եկար:

—Վայ Շօռշօռ, այս անգամ կոկորդի մէջ սկսաւ լալ Մուգուչը.—ախրը հնց թողանք Մուգնու էն կանանչ ձորերը, սառն աղբիւրները, Բասախ գետը, մեր թօռ գցելը, ձուկ կալնելը, մեր բօստանները. Ինչ քէֆեր ենք արել տէրտէրանց Պօղոսի հետ: Սըանից եղը ձեզ հարամ ընի ան հնգեր տղերք, որ մեզ էս նեղեալ տեղից, էս անտակ հորից չէք գալի հանում:

—Բա առանց հաղորդի պէտքա մեռնե՞նք, այ Մուգուչ, ասաւ Շօռշօռը լուրջ կերպով դառնալով ընկերոջը. էս թաւուր էլ մահ կլինի:

—Բա տէրտէրը ճրտեղան բերենք որ քեզ հաղորդի:

—Ադան, արի մի-մի պտղունց հող էլա գցենք բերաններս:

—Է՛հ, ինչ արած, որ բաժկի չկայ. հող գցենք, թող մեր սրբութիւնն էլ սա ընի:

—Ադան, բաժկի ասեցիր, միտս ընկաւ.—տկճորը...

—Վայ քու տղիս տղա. լափ մտներիցս գնացել էր հա. ադան, բեր մի-մին յաղորդենք. ասաց Մուգուչը և ձեռքը պարզելով հորի մէջ, գտաւ տկճորն ու, բերանը բաց արեց և

—Գինին որն ան, բաժկին որն ան, մին ան էլի, ասաց նա ու տղրուկի պէս կպաւ և սկսաւ ծծել:

—Ադան, կպրծացնես, մի դէ՛ռը տո՛ւր, տէնեմ, ասաց Մուգուչը Շօռշօռի ձեռքից առնելով տկճորը:

Տիկն այս անգամ սկսաւ հերթաբար անցնել ձեռքից-ձեռք և որքան կարելի էր, շարունակեցին խմել. վերջապէս, չորրորդ անգամ էլ մի լաւ խմելուց յետոյ, յանկարծ Շօռշօռը յետ քաշեց տիկը և ասաց.

—Ադան, էս հօ քացախ ան:

—Իրճաստ. հլա մի տէնեմ. ասաց Մուգուչը և նորից առաւ ու սկսաւ խմել:

—Է՛հ, էնդար էլ թունդ քացախ չի. —ասաց նա տիկը յետ քաշելով.—էս էլ որ ընկելա ձեռք, հալա ռազի չեմ:

Ինչպէս տեսնում ենք, մեր հերոսները գտնւում էին տաքարի մէջ: Մթութեան մէջ, գլուխները կորցրած, այս ու այն կողմ պտոյտ տալիս, երկուսն էլ թրը՝մի, ընկել էին բերանը բաց, խանդարած տաքարի մէջ և ֆնացել:

Խորովածն արդէն կրակի վրայ տոժտոժում էր: Բաղդօն ներս եկաւ, փռեց դաստախունը, քերեղանները հաղբեց, վեր առաւ մի մեծ գաւ և մօտեցաւ կարասներից մէկին:

—Ադան, կարմիր գինուց հանի, ասաց միւս ընկերը, եփած խորովածի շամփուրները ձեռքին ներս բերելով:—Օֆ, օֆ, օֆ, Բաղդօ, ինչ տամ որ չուտես:

— Չուտողի հէրն անիծած: Գառան խորոված, կանանչ տաքտեղ, կարմիր պամադօր, Աշտարակու գինի, օխտն օրւա մեռածն էլ որ հոտն առնի, տեղից վեր կկենա:

Սորովածը քաշեց փափուկ լաւաշի վրայ, գինին ու թէյի բաժակները մէջտեղ եկան, երկու լաւ կախան խաղող սուփրի մի կողքին դրեց, և մեր երկու այգեպանները բազմեցին սեղանի գլխին:

Բայց մինչև այդ ժամանակ մեր տաքարաւորները տրամադրութիւնն արդէն բարձրացել էր և գինին, որ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ գրեթէ քացախ, սկսել էր անել իր ազդեցութիւնը:

— Էհ, Շօշօն ջան, խմում եմ քու կենացը. սաղ ըլնես, ապրենք, լաւ ապրենք, դուշմանաքօն չըլնենք. Աստօժ պարզ երես պահի. էս թաւուր ուրախ օրեր շատ տէնենք. բարեմաղթեց Մուգուչն ու մի հանք էլ խմեց:

— Ադա, ինձ Շօշօն են ասում, սաղ մհալն էլ գիդան, որ ես մի իզիթ մարդ եմ. ո՞վ կարա ինձ ասի աչքիդ վրին ունքը կայ. խմի, քէֆ արա. էն մարդից իմ ճաքիւս կգայ, որ մեռնելուց կվախենա. տղամարդ կաց, քէֆըդ քօք պահի. դէսը տուր էդ օրհնւածը մի տէնեմ. ասաց Շօշօնն ու Մուգուչից առաւ տկճորը:

— Ադա, Բաղդօ, կասես ձէն ա գալի. էս ինչ բանն. յանկարձականջները սրելով ասաց սուփրի գլխին նստած հնձանաւորներից մինը, տաքարի կողմից լսելով ինչ որ խուլ մոմոց:

Երկուսն էլ լսելիքները լարեցին գէպի այն կողմը: Տաքարից նորից նրանց ականջին է հասնում ձայն ու շշուկներ:

— Ադա, Սուքաս, կասես տաքարի միջին սատանա կայ:

— Չէ մի զահրուժար կա. սատանէն ըստի ինչ զալաթ ա անում. ասաց միւս ընկերը և նորից շատունակից ուտել:

Մըճճ, դըն, դըն, դըն. խուլ կերպով լսում է նորից տաքարում անորոշ ձայները:

— Վալլա, ըստի սատանա կայ, Սուքաս, այ, հրէ տաքարի միջին:

— Վէ կալ ստաքանը մի շրիկացնենք, ինչ ես վախում սատանէքանցից. կըռնեմ բկիցը, էնդգար կհեխտեմ, որ բանֆոքի կըլնի. ես նրա կրունկն անըծեմ. ասաց Սուքասը, հերոսի նման դատարկելով բաժակը, բայց ներքուստ դողալով:

— Ես իրան օրումը էդ թաւուր բաներից վախիլ չեմ, սկսեց Սուքասը:— Մի օր Ուշականից Աշտարակ դալիս, Գոմշախրամումը մուծը վրայ տուց. մին էլ տէնեմ, բաղերից դուս էկան մի թօրուն սատանէք. հնց ին պարըմ, հնց ին պարըմ. հէնց մի զուռնա են ածըմ, որ մեր զուռնաչի Սուքօն զալաթ ա արել: Տէնեմ հրէս հարս են տանըմ, պար են գալի, թաւալ են տալիս, մի ուռա են կանչըմ. որ ինչ ասեմ: Հէնց որ ինձ տեսան, առան մէջներն ու սկսեցին պար գալլու. ես էլ ինքնու ինձ ասեցի, ադա, հիմի որ եղնաղի մէջ ես ընկել, դու էլ նրանցից դառ էլի. կոներս վէկալա ու սկսեցի միըղէյին. ճֆ, մի պար եմ գալի, որ ինչ ասեմ: Տէնեմ հրէս մի ախճիկ, էկել ա փաթաթում ա վղովս, պաչում, պաչալում ա ինձ...

— Ադա, սիրուն էր:

— Ըսենց պատկերքի կադր:

— Յիսուս Քրիստոս, խաչակնքեց Բաղդօն. — դրանց միջին շատ սիրուններն են ըլնում չէ:

— Բա սիրուն չէն... ինչ պատկերքի ուղըմ են, փոխըմ են էլի. սատանա չէն:

— Ադա, Սուքաս, ասում են զաթի Գոմշախրամումը չարքեբ կան:

— Միշակ Գոմշախրամումն են. քոմմա մեր բաղերում, ջրադացնիրում ու հնձաններում էնա լիքն են էլի. բայց էդ թաւուր վախալ վախիլ չպտես. հէնց որ վախեցար, էնա հացդ կերար:

—Ո՞վ վախի աղան... այս անգամ սրտապնդւած, բայց մի աչքը շարունակ դէպի տաքարը պահելով, արտաքուստ յոխորտաց Բաղդոն.—վէ կալ ըստաքանը մի տէնեմ... դրանց կրունկը...

—Մըճճճ... դըմ, դըմ, դըմ... լսեց նորից տաքարում:

Երկու ընկերները բաժանեցին կիսատ յետ դարձրին բերաններից ու նստած տեղներից սարսափած ծունկ չոքեցին:

Բայց յետոյ երկար ժամանակ ոչինչ չլսեց: Մեր հնձանաւորները սկսան կասկածել, թէ մի գուցէ դըժբախտ քամի էր, կամ մի որևէ գիշերային կենդանուկանչւածոց. մի փոքր հանդարտւած, նորից նստեցին տեղներում և շարունակեցին ուտել:

—Մի հաղ ասան, Բաղդո. քարուկին սկսի տէնենք-ինչ ես ականջ անում. ո՞վ գիտա, ինչ ա, որտեղան ա գալի. սատանէն ըստի ի՞նչ զալաթ ա անում:

Բաղդոն սկսեց.

—Աղիզըմ բուգաղար քեօմուրդանդըր,

Բէշան գիւնլար օմուրդանդըր.

Մանի...

Բայց այս անգամ Բաղդոյի ձայնը կոկորդումը ձնաց, երբ մէկ էլ տաքարից լսեց մի ահուկի որոտ, և Շօռշօռը խլելով Բաղդոյի բերնից երգի շարունակութիւնը՝ գոռաց տաքարից.

—Մանի սալանլի դէզըրսան,

Մագեար սանըն ուրագըն դամուրդանդըր:

Իսկ Մուգուչը Շօռշօռի ձայնից ոգևորւած, կոկորդով մին գոռաց.

—Այ ջան, այ ջան, կեցցէ՛՛...

Եւ այս ձայներն աւելի ահաւոր էին դառնում, երբ հնչւում էին տաքարի խորքում, միանալով սրբատաշ քարից շինւած արձակ դատարկութեան մէջ ձայնակցող արձագանքին:

Մի վայրկեանում, Բաղդոն ու Մուքասը լիք սուփ-

րան թողած, էլ չիմացան, թէ ինչպէս դուրս թռան հնձանից և քանի ոյժներումը կար, փախան՝ գոռալով.

—Սատանէքը՛, սատանէքը՛, այ հաւանք...

### III.

Նախապաշարման սոսկալի երկիւղից բռնւած, Սուքասն ու Բաղդոն դուրս թռան հնձանից և էլ ծառ ու մացառ, պատ ու առու չհարցնելով, մերթ գլորւելով, մերթ չորքոտանու պէս թաթերի վրա ընկնելով, փախան առանց յետ նայելու:

Երկար փախչելուց յետոյ, մի ժամանակ Սուքասի խելքը գլուխն եկաւ և կանգ առաւ զիւրը տանող ճանապարհի վրա:

Նայեց իր վրա ոտից գլուխ, այդ ժամանակ զգաց, թէ ինչ դուրսեան մէջ է ընկել: Շորերը պատուտւած, մինչև կէսը առուններում ջուր ու ցեխ դառած, երևան ու ձեռքերը չանդոտւած, ոտքերն էլ տակին դողում էին:

Բաղդոն չկար. ո՞վ գիտէ, որ ձորաբաշովը գլորւեց, որ պատից վէր ընկաւ, ոտը կոտրւեց, թէ՛ ո՞վ գիտէ, գուցէ սատանաները բռնեցին:

—Աղա Բաղդօ հէ՛՛է՛յ. ձայն տւեց նա իր ամբողջ թոքերով:

—Հէ՛՛է՛յ... շատ հեռուից լսելի եղաւ Բաղդոյի պատասխանը:

—Աղան, որդի՛ ես, կանչեց Սուքասը:

—Ըստի եմ, կաց, գալիս եմ:

Մի քանի րոպէից յետոյ, յանկարծ դիմացի պատից ցած թռաւ Բաղդոն, բայց ոտից գլուխ թաղւած այնպիսի մի ցեխի մէջ, որ բոլորովին ճանաչելի չէր լինում: Մի այգու պատից գլորւել էր լճացած ցեխի

մէջ և ամբողջովին դառել տիղմ. այնպէս որ, միայն աչքերն էն փայլում սեպած երեսի վրայ:

Դիշերայ մթութեան մէջ, երբ Բաղդոն այդ դրութեան մէջ պատից ցած թռաւ ու ցլեց Սուքասի առաջ, վերջինս սարսափած, կարծելով որ Բաղդոյի փոխարէն սատանան էր, որ դուրս թռաւ իր առաջ, և էլ ժամանակ չտալով նրան իրեն մօտենալու, քանի որ տեսնումը ոյժ կար, սկսաւ փախչել, գոռալով.

— Այ հաւանք, սատանէք:

Բաղդոն էլ կարծելով, որ Սուքասը սատանա տեսաւ, ինքն էլ քանի ոյժումը կար, սկսաւ վազել հետեւելով Սուքասին: Վերջինս սկսաւ աւելի սրբապատառ վազել, երբ տեսաւ Բաղդոն. — սատանան հետեւում է իրան:

Սրանց աղաղակից զանազան կողմերից դուրս թափւեցին մարդիկ և հազիւ հազ բռնելով նրանց, կանգնեցին:

— Սատանէն, սատանէն, բռնեցէք դրան, մեր բաղի տաքարից դուրս եկաւ. բռնեցէք, գոռում էր Սուքասը, ցոյց տալով սեպած Բաղդոյին:

Դիւղացիք յանկարծակի եկան և շրջապատելով վերջինիս, որն իրան կորցրած, չէր խանում թէ ինչ պատասխանի, բռնեցին:

— Ասեղ, ասեղ, աղէք, ասեղ խրէք, որ չխափանւի, ձայն տաւ դիւղացիներից մինը:

— Տղէք, գնացէք Բաղդոյի հաւարին, ձայն տաւ Սուքասը. — նրան բռնել են գցել եղնաղի մէջ. հեղջը հիմի լեղաճաք էլաւ, ես չարոցի եկաւ:

— Ես Յիսուս Բրիստոս, ասաց քաջասիրտ գիւղացիներից մինը և ասեղը խրեց Բաղդոյի կողքը. — դէ բռնէք:

Մի խումբ մարդիկ մի թուղ գցելով Բաղդոյի վզովը, մեծ հարայ-հրոցով սկսան քաշ տալ դէպի գիւղը:

— Ինչ կասի չհաւատաք հնա. դա Բաղդոյի կերպարանքի ա մտել, նրա ձէնի պէս կանչում էր, նրա

պէս էլ խօսում էր. բացատրեց Սուքասը. — տաքարի միջին էս սհաթիս էլ եղնաղ և, մի քէֆ են անում — տուա են կանչում, որ ինչ ասեմ. հեղճ Բաղդո, հիմի ով գիւղա ուր տարան:

Լուրը հասաւ Աշտարակ, թէ «բաղերի հնձաններում սատանա են բռնել». տեղից վեր կենտրոն վազեց դէպի սատանա բռնողները:

Բնած տեղներից նոյնիսկ անհանգիստ եղան նաեւ զլաւնի, տանուտէր, գզիր և այլն և անա ձիով, ձիաւորով, թուր ու թւանքով եկան շրջապատեցին սեւ սատանային ու այդպէս թափօրով մտան Աշտարակ:

Այստեղ հարց ծագեց, թէ ինչ պէտք էր անել այդ արտասովոր կալանաւորին, քանի որ օրէնքում նախատեսւած չէր, թէ Աշտարակու ոստիկանական իշխանութիւնը գողերից ու մարդասպաններից զատ կարող են կձերբակալել նոյնիսկ սատանաներ, դրա համար էլ «բաղօրտ» գրեցին ուր հարկն էր, իրենց քաջագործութեան մասին և խնդրեցին կարգարութիւն:

Բաղդոյին կալանաւորելուց յետոյ, մեր սատանայ բռնողները շարժւեցին դէպի Սուքասեց հնձանը, բռնելու և միւս սատանաներին:

Հռչակաւոր տէր Ա...ն վերցրեց իր խաչն ու աւետարանը և ասելով «հովիւ քաջ զանձն զնէ ի վիրայ ոչխարաց իւրոց» աւետարանի խօսքերը, ընկաւ ամբողջի առաջ և շարժւեց դէպի Սուքասեց այգու սատանաներով ի հնձանը:

Երբ մթութեան մէջ, ծառերի շարժւող ըստեղների տակ երևաց Սուքասեց հնձանը, նախապաշարած ժողովրդին տիրեց մի սարսուռ: Նրանց թուում էր, թէ այնտեղ այլանդակ պատկերներ են երևում, կտրանք վազվում են չարքեր, կամ ցրցւած են սպիւրացած կմախքներ, պողաւոր, պոչաւոր սատանաներ, որոնք չարչարում են Բաղդոյին: Իսկ ճրագի աղօտ լոյսը, որ ստացւում էր նայում երկու նեղ,



փոքրիկ լուսամուտներից, ասես չարքերի ու դեերի աչքեր լինէին:

Տէր Ա...ն, մի ձեռքով վեր բռնած խաչը, միւսով՝ աւետարանը, դիմեց դէպի հնձանը, կարդալով մի աղօթք:

Մարդիկ ահ ու դողով հետեցին նրան և ամեն բոլոր սպասելով որեւէ փորձանքի և անակնկալի, պատրաստուում էին դիմադրել:

Հնձանի դուռը ծածկւած էր. տէրտէրը փոխանակ ներս մտնելու, բարձրացաւ հնձանի կտուրը և սկսաւ ձայն տալ.

— Նազովրեցի Յիսուսի անունով հրամայում եմ ձեզ դուրս գալ այդտեղից:

Ոչ մի ձայն ծպտուն չէր լսուում. տէր հայրն սկսաւ կարդալ չարոց աղօթքը. ամենքը կտրից նայում էին դէպի ցած, սպասելով, թէ ահա սատանաները գուռը բաց կանեն ու կփախչեն:

Մակայն և ոչ մի ձայն և ոչ մի սատանայ:

Մի քանիսը սրտապնդւեցին և ահր սրտներում, ցած իջան ու բաց արին հնձանի դուռը. այդ ժամանակ տաքարից լսեցին ինչ որ ձայներ, խօսակցութիւն:

Մարդիկ ահաբեկւած, սկսան փախչել, բայց տէր հայրն ու տանուտէրը յետ կանգնեցրին և սկսան խորհրդակցել, թէ ինչ միջոց գործադրեն, որպէս զի նրանց այնտեղից հալածեն, կամ բռնեն:

Սուքասը խորհուրդ տւեց, ծակել հնձանի պատը և ջուրը կապել տաքարի մէջ, որից նրանք գուրս կգան ու կփախչեն, միայն հարկաւոր է հսկել, որ Բաղդոյին չտանեն հետները, որովհետեւ նրան անպատճառ բռնած կլինեն և խառնած իրենց հետ:

Դա արդէն տանուտէրի ու եասաւունների գործն էր, որոնք ձեռք առան հարկաւոր միջոցները:

Պատն սկսեցին ծակել:

Շօռշօռն ու Մուգուչը տաքարի մէջ խմելով բացա-

խած գինին, դուրս գալու մասին իսկի չէին էլ մտածում:

Տկճորը խառնած, մերթ խմում էին, մերթ կեցցէ գոռում, մերթ էլ մոմոացնում, խօսում էին իրար հետ:

— Ադահ, Մուգուչ, էս լէն աշխարհում մարդ հէջ մեռնելու մասին չի մտածի. հէջ մտածիլ մի, թող գինի ընի, մկան բնի միջին էլ կապրիմ:

— Դինի, էրմանըն գինի. գոռաց Մուգուչը, — նրա հետ ես դժողը էլ կգնամ, հիմի էլ հօ կնիկս ըստեղ չի, որ վրէս բարկանա ու գոռգոռա:

— Ո՛վ ուղում ա, թող հաչա, մի բան որ մեր բանը աչա. ասաց Շօռշօռը և ոգեորւած սկսաւ երգել.

Եար եար եանարամ,

Ասլի դօնարամ:

Հէնց այս «եար եար եանարամ» ասելը ֆնաց բերանում, երբ մէկ էլ ջուրը վերեկից շրոռալով սկսաւ թափւել նրանց գլխին:

Ջրի սառնութիւնը վայրկենապէս սթափեցրեց մեր գինեմոլներին, որոնք տեղներից վեր թռչելով կանգնեցին: Ջուրը հեղեղի պէս սկսաւ հոսել և մի քանի բոլակ ևս, նրանք պիտի խեղդէին տաքարի մէջ, երբ Շօռշօռը գոռաց.

— Ադահ, Մուգուչ, հեխլեցինք, վէր.

— Բա ինչ անենք:

— Էլ հուռար ունես, խարջի որ դուրս գանք, թէ չէ պրծում չկա, տաքարը հիմի կլցւի. և նրանք տաքարի մէջ, շրոռացող ջրի տակ սկսան պտոյտ գալ:

— Են Մօղնու զօրաւոր սուրբ Գէորգ, դու հասնես, ասաց Շօռշօռը վեր առնելով տկճորը և հազիւ շարժւելով տաքարից դուրս: — Ադահ, բարձրացիր իմ ուսերին, թէգ, ասաց նա Մուգուչին և բռնելով, բարձրացրեց իր ուսերի վրայ:

Մուգուչը ձեռքերը պարզեց դէպի տաքարի բերանը, բարեբաղդաբար բարձրութիւնն այնքան էր, որ

կարողացաւ կախել պատերից. այս անգամ Շոռշօռը ձեռքերով բարձրացնելով նրան, Մուզուլը դուրս եկաւ տաքարից:

—Դէ, ձեռք տո՛ւր ինձ. ասաց Մուզուլը փորի վրայ կախելով տաքարը:

Շոռշօռն էլ մեծ յաջողութեամբ դուրս գալով տաքարից, չմոռացաւ վեր առնել նաև տէճորն ու դուրս թռան հնձանից:

—Աղա՛, բռնէ՛ք, բռնէ՛ք, սատանէ՛քը փախան, բըռնէ՛ք. մթութեան մէջ նկատելով երկու փախչող սոււերներին, սկսան զոռզոռալ սատանա բռնողները:

—Բաղդօյին, Բաղդօյին ի՛լէք, տարա՛ն. Բաղդօ, Բաղդօ, կնաց, մի գնա. ամեն կողմից սկսան գոռալ եկողները:

Բայց Բաղդօն չկար: Շոռշօռն ու Մուզուլը մտնելով ծառախիտ այգիների մութ անցքերը, յաջողութեամբ իջան Քասախի ձորը և գիմեցին դէպի Մուզնու աղէքը:

Ետեից հետապնդող մարդկանց ձայները կամաց-կամաց խլացան և ապա իսպառ լռեցին:

#### IV.

Մուզնեցի աէքաէրենց Պօղոսն ու Վարդանը Քասախ գետի վրա թարփեր էին դրել և խիստ ախորժակ ունէին գէթ ձկնով ուտելու երենց ցամաք հացը:

Բայց որովհետև Մուզնեցիք բոլորն էլ Քասախ գետի «կապիտ» և «ճանառ» ձկնէլի սիրահար են, համարեա թէ հերթ չէին տալիս Պօղոսին ու Վարդանին և ով պատահում էր, ձեռքը տանում էր թարփը և ձկները տանում:

—Անաստօ՛ժ շանորդիքը թողնում չեն մի համն էլա

տէնենք, մի օր ասեց Վարդանն ու Պօղոսի հետ մի տնակ շինեցին թարփերի կողքին, իրենց ձորաբաժնում և գրեթէ գիշեր-ցերեկ այնտեղ էին մնում:

—Թէ մի կրկանեմ էդ ձուկ տանողներին, պտեմ տա շան սատակ անեմ: Եւ դրա համար խաների ժամանականից մնացած «գօռաղէն» — չախմախու թւանքը միշտ կողքին դրած, հաղիր էր պտնում:

Գիշեր էր: Կրակն արած, նստել էին տնակի մօտ մեծ ընկուզենու ծառի տակ. Պօղոսը հաց թխելու ռափաթա էր գործում, իսկ Վարդանը քթոցը վերջացրած, վերջին ուտերն էր ուրորում, քթոցի տակը կապելու համար:

—Աղա՛, Վարդան, սոված կոտորեցինք, վերկաց մի թարփերին ակը տուր, տես բան կո՛ միջին, բեր, խորովենք ուտենք էլա:

Ասաց Պօղոսը և ռափաթէն վեր դնելով, ձեռքը տարաւ չուխի տակ և հանելով թութուսի քիսէն ու չիբուխը, սկսաւ գանդադօրէն լցնել:

55—60 տարիքով, մուգ պղնձագոյն մազերով, կոլոր քթով, տափակ երեսով, կարճ ու հաստիկ մարդ էր Պօղոսը, իսկ Վարդանը 45 տարեկան, երկար հասակով, նիհար, որի դէմքի մկաններն ու խոր ընկած, փայլուն աչքերը ակամայ ծիծաղ և ժպիտ էին յարուցանում նայողի մէջ:

—Հա, էդ լաւ ասեցիր, շանորդիքը էսա քանի վախտա՛, թողնում չեն, որ ձեռներս բան էլա ընկնի. հէնց էրեսներս թեքում ենք թէ չէ, աչքի եղ թոցնողի դայդա թարփը չորացնում են. թէ մի կտէնեմ, էնա հօ պատաբաղը կաննացնիլ պտեմ: Ասաց ու «ղօռաղէն» ուտին դրած գնաց դէպի թարփերը:

—Աղա՛, մարդ-մուրթ պատահի դալմադալ չանեհա՛, իր սովորական ծանր ու վանկ-վանկ բառերով ասաց Պօղոսը, գործելով իր ռափաթէն:

Քասախ գետի որոնապաշտ ժապաւէնը գիշերային մթութեան մէջ, երկու ափերի խիտ ծառերի սոււեր-

ների տակ պարզեա՞ծ, նկատուում էր որպէս մի գեղի-  
ցիկ և կախարդական պատկեր, երկու ձորալանջերի  
խոր յատակում:

Ամեն մի ծառ, ամեն մի թուփ, ամեն մի քար ու  
ջրի կայլահներ լուսնի կաթնագոյն լոյսով ողողեա՞ծ,  
իրենց ներքևում տես թագցնում էին հազար ու մի  
գաղտնիք և քամուց շարժող ծառերի ստերները  
երբեմն Վարդանին խափս էին տալիս, թէ ըհը՛, հըէս  
մինը թագնեց այն ծառի, կամ այն թումբի ետևում  
և ակամայ ձեռքը տանում էր դէպի չախմախլուն:

Ուռենիների խիտ թփերն ու բալենու մացառները  
ճեղքելով, Վարդանը դուրս եկաւ գետի ափ և դիմեց  
դէպի թարփերը:

Բայց յանկարծ նրան թւաց, թէ մէկը թարփի վրայ  
կուացած, խառնում է ջուրը և ուզում է ձկները բռնել:

— Ըհը՛, ձուկ գողանողը... շնչաց Վարդանն ու  
պլպլելով մի հաստ ուռենու բնի ետև, չախմախլուն  
ուզղեց դէպի նա: Ստերը մտաւ թփերի մէջ ու նո-  
րից դուրս եկաւ: Նրա ամեն մի շարժումը չափում էր  
Վարդանը և եզրակացնում էր, որ ձկները հաւաքել և  
թարփը մաքրելուց յետոյ, ուզում է ետ դառնալ:

— Բժմի... յանկարծ ձորով մին որոտաց հրացանը  
և այդ որոտումի հետ թէ թարփի վրայ կանգնած սև  
ստերը գլորեց ջրի մէջ և թէ մէջքի վրայ թրմփալով,  
գետին կաւ ինքը Վարդանը:

Հրացանի որոտի հետ միաժամանակ վեր թռաւ և  
Պողոսն ու չիբուխը խրելով գօտին, շտապեց դէպի  
թարփերը:

Դետի վճիտ հոսանքի մէջ նա նկատեց ինչ որ մի  
ան ու մեծ գիակ գլորելիս, որը տատանում էր կո-  
հակների հետ, մերթ անցնելով ջրի տակ, մերթ էլ  
կիսով չափ երևալով ջրի երեսին:

Պողոսը տեսնելով այդ, սոսկաց, մտածելով, որ դա  
Վարդանի հրացանի գոհը պիտի լինէր:

— Ադա՛, Վարդան, Վարդան, որդի՛ ես, ձայն տաւ  
Պողոսը ձորով մին:

Բայց Վարդանը չկար. ոչ մի ձայն-ծալտուն չէր  
լսում:

Քեռի Պողոսն սկսաւ տենդային արագութեամբ  
փնտել Վարդանին, ամեն տեղ, գետի ափին, ուռինե-  
րի արանքներում և այլն:

— Ադա Վարդան, այս անգամ աւելի անեղ ձայնով  
գոռաց Պողոսը, որի ձայնը արձագանք տաւ հեռեւ  
ձորալանջերում:

— Պողոս, արի՛ ըստի... յանկարծ փոքր հեռից լըս-  
ւեց մի նւազ և խեղդուկ ձայն. Պողոսը դիմելով այն  
կողմ, յանկարծ տեսաւ Վարդանին հասակով մին փըռ-  
ւած գետինն՝ տնքալիս:

— Ադա, էդ ի՞նչ արիր, այ տնաքանդ, էդ ո՞ւմ սպա-  
նեցիր, ասաց Պողոսը կռանալով Վարդանի վրայ:

— Ո՛ւմ պէտքս սպանէի. գողն եկաւ թարփի վրայ,  
ձուկ էր գողանում. թւանքը կրակեցի, փոխանակ բեր-  
նի դհիցը բացւելու, կոթի դհից կրակեց ու տեց  
սանկ ու սար արեց ինձ. վայ ես մեռայ, Պողոս, թէգ,  
մի իլլաջ արա՛, տուն հասցրու, գոնէ երէխէքանցս  
կշտին կլա մեռնեմ: Վայ բալէք ջան, էլ մնաց պէտք ա  
ընի՛ ձեր ճարը, ես մեռնում եմ:

— Ադա՛, ի՞նչ ես գլխիցդ դուրս տալի, ի՞նչն ա քեզ  
կպել:

— Ադա, գիւլլէն, գիւլլէն, չես հաւատձում. հիմի  
ուշունցի տուտը կսկսեմ հա՛, էնա գիւլլէն կոթի դհից  
ա դուս էկել ու դոշս ա մտել էլի, էլ մեռնելը մնաց  
կընի՛. վայ Աստօծ, էս էր իմ աջալը՞:

— Ադա՛, այ խելքի բուն, տօ հայւան, տեւ ես է՛ն  
մարդին սպանել, ջամդաքը ջուրը տանում ա, ասըմ  
ես թէ գիւլլէն ինձ ա կպել:

— Վայ անհաւատի իրկիր, բա իմ չես փուլ գալի.  
էս թաւուր էլ անհաւատ մարդիկ կլնն. դէ կաց ըն-  
չբու մեռնեմ, նոր հաւատայ հը՛. ասաց Վարդանը

և բերանը լայն բաց արած, սկսեց արտագոյնել շնչառութիւնն ու անբնական ցնցումներ գործել:

— Եաւաշ մի տէնեմ, ասաց Պօղոսը վախեցած. — Կարելի ա որ թւանքը համ անաշից ա բացելի, համ ետեկից. ադն, հօ էրկու գիւլա չէթր գցել միջին:

— Ինչ գիդամ, էսա ինն ամիս ա, լցրած էր, մտիս կմնա թէ քանի գիւլա կմր:

Պօղոսը վեր առնելով հրացանը, ուշի ուշով տնտըղեց և նկատելով որ հրացանը բոլորովին անփնայ է.

— Ադն, աօ հայւան, բա ռւրա կոթի դճին որեւէ ծակ. թւանքը լուի (փողի) բերնիցն ա կրակել ու տւել ա էն մարդին սըպանել. էդ մհանայ չհանայ ա:

— Սնա կաց, թէ Աստօծը կտիրես, նիդացած ու նւազած ձայնով ասաց Վարդանը. — Թնդ իմ հալովը մեռնեմ, մի բան որ ձեզ Աստօծ չկա:

— Տօ մի բաց արա տէնեմ որդի ա մտել գիւլէն է. ասաց Պօղոսը և քանդելով Վարդանի արխալուզի կոճակները, սկսաւ փնտռել գնդակի տեղը:

— Վայ ես մեռայ, մեմուում էր Վարդանը. — մտիկ արա տես որդի ա մտել, հօ արին չի գնում:

Բայց ոչ արին կար, ոչ էլ վէրք, այլ աջ ուսը մի փոքր կարմրել էր:

— Դէ քու գիծ ախմախ գլուխը թաղեմ, ասաց նա մի աքացի հասցնելով Վարդանի մէջքին. — վեր կաց կորչենք, թէ չէ հիմի որդի վորայ ա, կգան ու ձեռ ու ոտդ կապտած, Սիրիր կտանեն: Իշի գլուխ, մի ձկան համար տւել ա մարդ ա սպանել բօլ չի, հալա վեր ա ընկել թաւալ ա տալի, թէ թւանքը պոչի գհից ա բացելի. մեռնում ես մեռի. շանը սատկիլ չկայ. էդ ոչ թէ գիւլէն ա կպել, այլ թւանքն ա փիս թափ տւել և տւել ա դօշիդ վէր գցել: Դէ հիմի թնչ պատասխան տանք էն մարդու տիրոջը:

Վարդանը մի րոպէ շւարած, կող ու կուշտը շօշափելով, պսակած տեղից նստեց և համոզւելով որ զենգակ գիդածի չափ վիրաւոր չէ, նախ մի ոտը շարժեց,

ապա երկրորդը, յետոյ վեր կացաւ, ու կուշտը հայեւուց յետոյ երկմտօրէն դարձաւ Պօղոսին.

— Դրճաստ, այ Պօղոս, գիւլէն ինձ չի կպել, և ըսկըսաւ կանգնած տեղը պտոյտ գալ:

— Դողին ա կպել, գողին, բա ում ա կպել, հրէն ջուրը վերա կալել տանում ա:

— Վն... ապուշ կտրւած բացականչեց Վարդանը. — բա ճնց պէտք ա ըլնի. դէ գնանք ջրից հանենք է:

— Խելքդ գլուխդ թօփ արն, էլ ջրից հանելու բան չկա, էնտ սիւրբականի բանատեղ էլանք, էլ ինչ հանենք, էնա մարդը մեռել ա, էլի:

— Մեռել ա... սոսկաց Վարդանը բերանը լայն բանալով և գոյնը գցելով. թն էս ջուռայ մութանաթ թւանքի տիրու հէրն անիծած. ես կրակեցի որ սպանի, թէ չէ վախացնի. սա սատանական բան ա, պէտք ա ջարդեմ, ասաց և վեր առնելով թւանքը, դրեց մի քարի վրայ և երկու փթանոց էլ մի քար վերցնելով, գցեց վրան ու փշրեց. — էս ջուռա սատանական բանը պահիլ չեն. բա հմի ինչ անենք:

— Ինչ պտենք անի, փախչենք քանի մարդ ու մուրդ չի տեսել. և Պօղոսն ու Վարդանը հաւաքելով իրենց ինչ որ ունէին, սկսան փախչիլ:

Այդ ժամանակ, ետեի կողմից, լուեցին ոտքերի ձայներ և խօսակցութեան շշուկներ.

— Պօղոս, փախի, մարդ ա գալի, ասաց Վարդանը արագացնելով իր քայլերը:

— Վարդան, փախի, էկան. ասաց Պօղոսն իր հերթին և սկսան աւելի արագ փախչիլ:

Ետեի կողմից եկողները Շօռչօռն ու Մուգուշն էին, որ իջնելով Աշտարակու ձորերը, հասել էին այդտեղ:

Սրանք էլ իրենց հերթին լսելով հրացանի որոտը, երկուսն էլ սարսափից մնացին տեղներումը դամւած:

Շօռչօռը, որ տեղնորը շալակել անաշից գնում էր, որոտը լսելուն պէս, մտաւ ծառի ետեւ ու պարզեց:

— Ադն, էդ զահրումարը վեր գցի կորչենք էլի,

ասաց Մուգուշը սարսափից խեղդեած ձայնով, — շա-  
նորդիքը էնա ձեռը չեն քաշում, հետևում են որ սպա-  
նեն էլի՞. Աշտարակցիներից ո՞վ ա խէր տեսել:

— Ինչը՞ վէր գցեմ, տկճորը՞. աշխարք քանդւի  
տկճորը չեմ վէր գցի. բաշ գէդար, բողբաշ գէթմազ  
(գլուխս կտամ, բողբաշը չեմ տալ). սա ինձ հետ գե-  
րեզման պտեմ տանի. ասաց Շոռշօրը աւելի պինդ  
խտտելով տկճորը և նորից վեր կենալով, սկսան արագ-  
արագ առաջ վազել:

Բաւական առաջ անցնելուց յետոյ, յանկարծ ծա-  
ռախիտ անտառում պատահեցին երկու սոււերների —  
Պողոսին ու Վարդանին, սակայն չճանաչելով և կաս-  
կածելով, որ իրենց հետապնդող Աշտարակցիքն են,  
շուռ անցան ուրիշ կողմ:

Իսկ Պողոսն ու Վարդանն էլ իրենց հերթին չճա-  
նաչելով Մուգուշին ու Շոռշօրին, և կարծելով, թէ  
սպանւածի տէրերն են հետևում իրենց, այնպէս  
փախան, ասես դժողբից:

Պողոսն ու Վարդանը ուրիշ ճանապարհով, իսկ  
Մուգուշն ու Շոռշօրն էլ դադանոցներով, դիմեցին  
դէպի Կարբու ձորերը:

# V.

Գիշերւայ ժամի 12-ին մօտ էր, երբ ջրաղացպան  
Աւագը վերջացրեց քարը սրելը և տեղը դնելուց յե-  
տոյ, չախ-չախը ուղղեց ու ջուրը կապեց և քարն ըս-  
կըսաւ մեծ աղմուկով պտտել:

Այժմ հարկաւոր էր ընթրել, որովհետև սաստիկ  
քաղցած էր: Բայց այդ գիշեր նա բաւական հարուստ  
ընթրիք ունէր: Մի կողմում, օջաղի վրայ, տապակ-  
ւում էր ջրաղացի հաւարնից մորթած ամենաչաղ հա-

ւերից մէկը, կովի արդար իւղով, կարմիր ու սև բա-  
գիրջանով տապակած. թխել էր սպիտակ պլիւրից  
փափուկ բոքոն և կանանչին էլ հաղբիլ:

Սուփրան բանալով ջրաղացի վերին անկիւնում շի-  
նած թախչայի վրայ, Աւագը ծալապատիկ նստեց և  
խաչ հանելով երեսին, ձեռքը մեկնեց դէպի դաստա-  
խունը:

— Ա՛հ, մի բութիկայ գինի ընէր, ինչ ասես ար-  
ժէր. ասաց նա ինքն իրան, բայց խօսքը մնաց բեր-  
նումը, երբ մին էլ տեսաւ, որ քարը գնալով իր պտոյտը  
դանդաղեցրեց և յետոյ կամաց-կամաց ձայնը նւագե-  
լով, կանդ առաւ:

— Թո՛ւ, քու տիրու ինչն ասեմ, ասաց նա զայրա-  
ցած: — Զահրումար թօփի փառերից էլի վէր թափե-  
ցին. վեր կենալով տեղից, դուրս եկաւ ջրաղացից ու  
բարձրանալով թումը ջուրը կտրեց: Յետոյ իջաւ  
կողքի խոտանոցը, այնտեղից վեր առաւ մի խորոմ  
խոտ ու դուրս եկաւ:

— Հայւան էըը սոված կընի գիտե՛ս, ասաց նա ինքն  
իրան. — իրիկունը մոռացել եմ խոտ տալը: Եւ նա  
ջրաղացի ետևով պտոյտ տալով, եկաւ դիմացի փոքրիկ  
պարտէզը, ուր սովորաբար ծառից կապած էր լինում  
Համադանի սև էշը:

Բայց ծառի տակը դատարկ էր և թուկի ծայրին էլ  
էշ չկար:

Աւագը մնաց սառած:

— Էս էշն ո՛ւր ա, թո՛ւ, քու տիրու ինչն ասեմ.  
նօխտէն կտրել և էլի կորել ա՛ գիդաս. և դուրս գալով  
պարտիզից, չո՛ւ, չո՛ւ, չո՛ւ, կանչելով սկսաւ փնտռել և  
դիմել դէպի ցած:

Մթութեան մէջ տեսնելով Աւագի սոււերը, Վար-  
դանը կարծեց թէ իրենց հետևողներից մէկն է ու  
ծըլկեց դէպի ուռներ թաղստոցները, իսկ մթութեան  
մէջ, ջրաղացպան Աւագն էլ կարծեց թէ իր էշն է:

— Զօ՛շ, քու տիրու հէրն անիծած, ո՛ւր ես գնում.

ասելով հետեւեց նրան: Վարդանն ուներ ժիջով սկսաւ փախչել դէպի ջրաղացի կողմը, իսկ Աւագը արագ սկսաւ հետեւել նրան, չօշ, չօշ, չո՛ւ, չո՛ւ, անելով:

Մի քանի րոպէից յետոյ, յանկարծ Աւագը ձախ կողմից լսեց ոտքերի ձայն և յետ նայելով, տեսաւ վազող երկու մարդկանց: Դրանք Շօռշօնն ու Մուգուչն էին:

Աւագը մտածեց, որ սրանք անպատճառ գողեր են, և որ էջը սրանց խաչովը թաղած կ'ընին. վազելով նրանց ետեւից, ձէնով մին գոռաց.

— Ադա՛, հէ՛յ, էդ ո՛ւր էք փախչում. կայէք տէնեմ ուր ա իմ էջը:

Շօռշօնն ու Մուգուչը, Վարդանն ու Պօղոսը, որոնք մթութեան մէջ միմեանցից փախչում էին ինչպէս ժանդախտից, լսելով Աւագի գոռոցը, նրանց սարսափն աւելի դրական դարձաւ, և ձորի խորութեան մէջ մի քանի տեղից աւելի ուժիղ կերպով արձագանք տուող, զընզընդացող ձայնը, թւաց թէ Աշտարակեցիք հաւաքեցան են, իսկ Պօղոսն ու Վարդանը կարծեցին, թէ սպանւած մարդու տէրերն են հետապնդում իրենց, գլուխները կորցրած, փախան ամենքը մի կողմից դէպի գետի այն կողմը, ուր գտնւում էր փայտէ հասարակ կամուրջը:

Աւագը, որ իր կեանքի մեծ մասը ձորումն էր անցկացրել և բաւականին սրտոտ տղամարդ էր, աւելի կտրուկ ճանապարհով գնաց և կամուրջի վրայ փակեց նրանց ճանապարհը:

— Ադա՛, Շօռշօն, դէսն արի, կամուրջը բռնել են, ձայն տաւ Մուգուչը, մթութեան մէջ նկատելով Աւագի սուերը և դիմեց դէպի ջրաղացը: Շօռշօնը, որ արիւր շարունակ շալակած ունէր, հետեւեց նրան և նոքա մտան ջրաղացի ջրատունը:

Վարդանն ու Պօղոսն էլ հետեւեց նկատելով կամուրջի վրայ կանգնած մարդուն, թեքեցին դէպի դարձեալ ջրաղացը:

Աւագը երկար սպասելուց յետոյ, կարծելով, որ նրանք արդէն անյայտացան, գետի հոսանքի հետ սկսաւ ցածանալ դէպի նեւքե փնտռելու իր էջը:

— Զո՛ւ, հա չո՛ւ, չո՛ւ, հա չո՛ւ, կանչելով, նա հասաւ մինչև թարփերը. թարփերից էլ անցնելով, նա բաւական ներքեւում գտաւ իր էջին սատկած, գետի ափին պարզւած: Զուրը նրան քիչ ժամանակ էր, որ դուրս էր գցել ափ:

— Վայ, իշուկ ջան, բացականչեց ուհանը ծնկներին խփելով և դառն ամսոսանքով յետ դառաւ դէպի ջրաղացը:

Վարդանի հրացանի գնդակը այդ իշին էր, որ գետին գլորեց, մթութեան մէջ նկատելով որպէս ձկան գողի:

Մօտենալով ջրաղացին, Աւագը չնկատեց, թէ ինչպէս երկու սուերներ նկատելով իրան, թաւան ջրաղացի ցամաքած առուն և մտան նորից ջրատունը, ուր արդէն թաղնւած էին Շօռշօնն ու Մուգուչը:

Էջի կորստեան կսկիծը սրտում, նա մտաւ ջրաղաց և նստելով սուփրայի վրայ, սկսաւ ուտել իր ընթրիքը:

Երբ Պօղոսն ու Վարդանը մտան ջրաղացի ջրատունը, իհարկէ, բոլորովին ապահով, որ այնտեղ մարդ չկայ, բայց Մուգուչն ու Շօռշօնն արդէն այնտեղ էին և նկատելով եկորներին, սքլեցին վերի անկիւնը և մտան պտուտակի տակ:

— Վա՛, էս ընդամ մութն ա՛, ըստի սատանա կըլնի, մըթմըթաց Վարդանը:

— Ադա՛, սո՛ւս կաց, բարկացաւ նրա վրայ Պօղոսը. — սատանէն դու ես, որ մարդ սըպանեցիր ու մեղ փախստական շինեցիր:

Շօռշօնը վերին պատին դէմ եղած ժամանակ, մի քար պոկեց և շրջափառ ընկաւ ջրի մէջ:

— Ա՛յ Պօղոս, ըստի սատանայ կայ, դուրս գանք. Կրկնեց նորից Վարդանը:

— Ադա՛, մի սուս կաց տէնենք ինչ ա դալի գլխը—

ներս. հրէն մարդիկ հաւաքւել են ջրաղացի դռանը, մեզ բռնելու վրայ են մտածում. հմի խաբարը հասաւ տեղ. ու էլ պրիստաւ, գլաւնի չի մնայ, քօմմա կթափւեն ըստեղ:

—Վայ Աստօծ, էս ինչ փորձանքի պատահեցինք. խորին կսկիծով շնջաց վարդանը:

Այդ ժամանակ Մուգուչը որպէս զի դրանց դուրս փախցնէր ջրատնից, ձեռքով ջուրը շփեց դէպի խօսող կողմը:

Պօղոսն ու Վարդանը սարսափից չուղենալով դուրս գալ ջրտնից, սկսան պտոյտ գալ մթութեան մէջ, մինչև ծնկները մտած ջրի մէջ:

Սկսեց իրարանցում:

Աւագը յանկարծ ուշքի եկաւ և նկատեց ջրտանը ինչ որ շրջփող, վեր կացաւ ու եկաւ, կանգնեց ջրատան գլխին:

Շրջփիւնը շարունակում էր:

—Տէր Յիսուս Քրիստոս, շնջաց Աւագը. —սատանէք կան հա... ասաց և դուրս գալով ջրաղացից, գնաց դէպի թումրը:

—Սպասէք, ես ձեր կրունկը կանխեմ, դէ ջրատանը հաղ արէք. և գնաց ջրաղացի ետեւն ու ջուրը բաց թողաց:

Բայց մինչև այդ ժամանակ, Շօռչօն ու Մուգուչը յաջողեցին ջրատան վերևի լայն բացւածքով դուրս գալ ջրաղացի մէջ:

Ջուրն ահագին աղմուկով նաւակով թափւեց ջրատունը և տեղի ունեցաւ սարսափելի իրարանցում:

Վարդանն ու Պօղոսը լող տալով, հազիւ աղատւելով խեղդելուց, ջրի հետ դուրս եկան ու իրանց ձգեցին ափը:

Շօռչօն ու Մուգուչը նկատելով սփոռցի վրայ շարւած հաւն ու բոքոնները, փաթաթեցին ու վեր առնելով, դուրս թռան:

Աւագը յետ դառնալով Զմբից, առաւ դագանակը

և նկատելով Վարդանին ու Պօղոսին, շարտեց ետևեքից, որոնք թրջւած մկան պէս հազիւ կորան մթութեան մէջ:

Շօռչօն ու Մուգուչը անցնելով գետը, նեղ ու ոլորապտոյտ ճանապարհներով բարձրացան դէպի տուն:

Հասնելով մի հսկայական քարափի գլխի, նրանք բաց արին դաստախունը և սկսան ուտել:

Տկճորի քացախած գինին պրծաւ:

—Աղա, Շօռչօն, մի տէնեմ էդ տկճորը:

—Կա ոչ, պրծել ան, ասաց Շօռչօնը, աւելի պինդ պահելով տիկը իր թևի տակ:

—Խի՛, էդ երբ պրծաւ, սո՛ւտ ես ասում, կայ միջին:

—Ասում եմ չկայ, տանիլ պտեմ տուն, գիշերը ջրով ողողեմ ու խմեմ:

—Ձէ, ախպէր, երէկ քեզ մօտ էր, էսօր էլ հերթն իմն ան, ես պտեմ տանի տուն:

—Տիկը տուղ չկայ, արխէյին կաց:

—Դէ դէսը տուր է. ասաց Մուգուչը և երկու ձեռքով բռնեց տկճորից:

—Բաց թող, տալ չեմ, ասաց Շօռչօնը և կանգնեց. կանգնեց և Մուգուչը, բայց երկուսն էլ պինդ բռնած տկճորից:

—Աղա, ասում եմ բաց թող, ձգեց դէպի իրան Մուգուչը:

—Ասում եմ ձեռք քեզ քաշի. բարկացաւ Շօռչօնը և տկճորը ձգեց դէպի իրան:

Տեղի ունեցաւ սաստիկ քաշկռտոց և տիկը երկարած երկուսի մէջ տեղում, դարձաւ կուր առարկայ:

—Տուր, վերջին անգամ ձգեց Մուգուչը:

—Տալ չեմ, ասաց Շօռչօնը և քարափի ծայրին կանգնած, ետեւ արած դէպի անդունդը, քանի ոյժ ունէր, կախ ընկաւ տկճորից:

—Աղա, ինչ թէ տալ չեմ. դէ քաշի տէնեմ ինչ ես

պրծացնում իմ ձեռից. ասաց Մուգուչը և իր հերթին էլ ինքը կախ ընկաւ:

Տկճորը երկարեց, երկարեց և յանկարծ մէկ էլ դուրս պրծաւ Մուգուչի ձեռքից:

Անհաւասարակշուքեան սոսկալի թափով Շոռշօը տկճորը խտրախն, ետևի կողմից բաց ընկաւ դէպի անդունդը:

— Աղա, տիկը... բացականչեց Մուգուչը. բայց մէկ էլ այն տեսաւ, որ ոչ Շոռշօն կայ և ոչ էլ տկճորը:

Հսկայական ժայռի ստորոտում լսեց մի խուլ շառաչին, ջրի յորձանքի ուժեղ ձայն և ապա ամեն ինչ առաջւան պէս լսեց:

Շոռշօն վայր ընկաւ քարափից և տեղն ու տեղը անշնչացաւ:

Եւ նրա մահից յետոյ, ժայռը զարձաւ Շոռշօնի համար որպէս անմահ կոթող. ժողովուրդը նրան կնքեց «Շոռշօնաքարափ անունը»:

Միւս օրը, երբ բազմաթիւ մի ամբոխ տանուտէրի հետ եկաւ բանդից հանելու սատանային, տեսան մաքուր դատարկ:

Բաղդօն փախել էր:

Սատանէն խափանել ա, ասաց տանուտէրը. — էդ անիծածների հետ գլուխ թափիլ կլինի:

Այդ ժամանակ տանուտէրին մօտեցաւ Ճանճոտինց Մուղինը և զանգատուեց, որ զիշերն իր ձին գողացել են:

— Դէ էնա սատանէն ա նստել ու փախել էլի:

— Վայ քու աղիս-տղա, ասաց Մուղինը ծափ տալով, ախրր զիդամ որ անիծածները էս քանի զիշեր էր, որ նստում էին և դոմում խառ-խառ քշում:

— Պէտք ա թամբին ձուլթ ու կուպր քսէիք ու բըռնէիք, հիմի եկել ասում ես որ ինչ անեմ:

Ամբոխը քաշեց. գնաց և Մուղինը, սաստիկ տանջւելով, թէ ինչու ձուլթ ու կուպր չքսեց թամբին, որ չկորչէր իր 200 բուրխանոց ձին:

## Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր.

Երես 1 տող 8  
,, 17 ,, 16  
,, 29 ,, 9

Տպւածէ Պէտք է կարդալ  
Շոռշօնը Մուգուչը  
Կճերբակալի Կճերբակալի  
ուհանը Աւագը



## ՀԵՂԻՆԱԿԻ ՄՕՏ ՎԱՋԱՌՈՒՄ ԵՆ.

«ԿՈՒՍՆ» երգիծ. ժողովածու, խմբագր. Մ. Բագ-  
րատունու . . . . . 1 ր.—

«ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ»—Սիրոյ և կա-  
րեկցութեան երգիչը, Ս. Տէրաէրեանի . . 35 կ.

«ԾԻԾԱՂԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐ» 1 գրքոյկ—Շուշուա-  
քարափ, երգիծար. պատկեր . . . . . 10 կ.

---

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Գրաւարով գնողներին առանձին զեղծ.

Հասցեն՝ Эривань, М. Баградуни.

---

Մամուլի տակ է և շուտով լոյս կտեսնի «ԾԻԾԱՂԻ  
ԱՐՅՈՒՆՔՆԵՐ» II գիրք—Երեանը (Երգիծանք)։

ՀՀ Ազգային գրադարան



NL0363778

59.610